

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՐԲԱՆ ԽՈՍՐԱՎԻ

ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՌԵԳԻՈՆԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ
Ի.Դ. 03.02- «Տնտեսական, սոցիալական և քաղաքական
աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГОРБАН ХОСРАВИ

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА БАССЕЙНА
КАСПИЙСКОГО МОРЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ РЕГИОНАЛЬНОЙ
БЕЗОПАСНОСТИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата географических
наук по специальности 03.02- “Экономическая, социальная и
политическая география”

ЕРЕВАН – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ աշխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

աշխ.գիտ.դոկտոր,պրոֆեսոր

Ս.Ա.Մելքունյան

աշխ.գիտ. թեկ.դոցենտ

Մ.Մ.Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. ապրիլի 26-ին ժամը 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող Երկրաբանության 005 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 30025, Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է «26» մարտի 2013թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

Երկրաբ.հանք.գիտ.թեկնածու, դոցենտ

Մ.Ա.Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете
Научный руководитель докт.геогр. наук, профессор А.Р.Авагян

Официальные оппоненты:

докт.геогр.наук профессор

С.А.Мелкумян

кандидат геогр. наук, доцент

М.М.Торосян

Ведущая организация: Армянский Педагогический университет

им. Х.Абовяна

Защита состоится «26» апреля 2013 г.14³⁰ часов на заседании Специализированного совета 005, Наук о Земле действующего в ЕГУ по адресу: 30025, Ереван, ул. А.Манукян 1

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан «26» марта 2013 г.

Учёный секретарь специализированного совета

кандидат геолого-минералогических наук, доцент

М.А.Григорян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը Կասպից ծովի ավազանում (Կասպյան տարածաշրջանում)* և հարակից շրջաններում աշխարհաքաղաքական գործընթացների հետևանքով զգալի դժվարություններ են առաջացել նավթի և բնական գազի արտահանման համար, որի պատճառով նվազել են էներգակիրների արտահանումից ստացվող եկամուտները: Այս գործընթացում ամենից շատ տուժում է Իրանի տնտեսությունը: Հետևաբար, Կասպյան և հարակից տարածաշրջաններում քաղաքական խնդիրների լուծումը առաջնային նշանակություն ունի Իրանի համար:

Այդ խնդրի լուծման ուղին աշխարհաքաղաքական գործընթացներին իրանամետ և ընդհանրապես Կասպյան ողջ տարածաշրջանային շահերին նպաստող ուղղություն տալն է, որի իրագործման ռազմավարության մշակումը արդիական է, իսկ ռազմավարության մշակումը հնարավոր է տարածաշրջանի աշխարհաքաղաքական բոլոր խնդիրների համակարգային ուսումնասիրության գնահատման, գիտականորեն հիմնավորված ծրագրերի առաջարկման միջոցով:

Աշխատանքի նպատակները և խնդիրներն են. Աշխատանքի նպատակն է կատարել Կասպյան տարածաշրջանում և նրա շուրջը ծավալված աշխարհաքաղաքական գործընթացի կանխատեսում և արդյունքների հիման վրա մշակել նավթի և բնական գազի արտահանման ծավալների մեծացման և արդյունավետության բարձրացման միջոցառումներ:

Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրվել և գնահատվել են Կասպյան տարածաշրջանում և նրա շուրջը ծավալված աշխարհաքաղաքական գործընթացները՝ իրենց պատմական ծագումով, ներկա վիճակով:
2. Գիտականորեն հիմնավորել են այդ գործընթացների նպատակային զարգացման ուղիները:
3. Տրվել է Կասպյան տարածաշրջանից նավթի և բնական գազի

* Կասպից ծովի ավազանի փոխարեն օգտագործվում է նաև Կասպյան տարածաշրջան հաշվի առնելով աշխարհաքաղաքական գործընթացները և հեղինակի նպատակը՝ Կասպից ծովի ավազանին աստիճանաբար տարածաշրջանին բնորոշ բովանդակություն տալը:

արտահանման ենթակառուցվածքների գնահատականը:

4. Կատարվել է Կասպյան տարածաշրջանից նավթի և բնական գազի արտահանման նոր ուղիների հիմնավորում:
5. Գնահատվել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքաաշխարհագրական դիրքի փոփոխությունները, էներգակիրների արտահանման ծավալների ավելացման հնարավորությունները:

Յետագոտության օբյեկտը և առարկան Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում Կասպյան և հարակից տարածաշրջաններն իրենց աշխարհաքաղաքական, նավթի և գազի արտահանման խնդիրներով: Յետագոտության առարկան է՝ տարածաշրջանում նավթի և բնական գազի արտահանման առանձնահատկությունները՝ աշխարհաքաղաքական ենթատեքստում:

Աշխատանքի գիտական նորույթը

- Առաջարկվում են Կասպյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ:
- Գիտականորեն հիմնավորվել են նավթի և բնական գազի արտահանման նոր ուղիների անհրաժեշտությունը:
- Կանխատեսվել են նավթ ու բնական գազ ներկրող Արևմտյան երկրների և ներկրման մեծ հավանականություն ունեցող արևելյան երկրների քաղաքական «հաշտեցման» ուղիները:
- Տրվել են Իրանի շուրջը ծավալված աշխարհաքաղաքական երևույթների և ճգնաժամային երևույթների գիտական վերլուծությունը:

Պաշտպանվող հիմնական դրույթները

1. Որոշված և հիմնավորված են Կասպյան շրջակա տարածաշրջաններում աշխարհաքաղաքական գործընթացների զարգացման օրինաչափությունները:
2. Հիմնավորված են տարածաշրջանում աշխարհաքաղաքական գործընթացների նպատակային ձևերի հաստատման և նավթի ու բնական գազի ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:
3. Որոշված և հիմնավորված են Իրանի շուրջը ծավալված քաղաքական (աշխարհաքաղաքական) գործընթացների նավթի և բնական գազի ռեսուրսների պատճառահետևանքային կապերը:

Աշխատանքի մեթոդական հիմքը

Աշխատանքի իրականացման համար տեսական և մեթոդական հիմք

են հանդիսացել քաղաքական, աշխարհաքաղաքական ռեսուրսների գնահատման վերաբերյալ տեսական աշխատությունները:

Ուսումնասիրության մեթոդիկան հիմնված է միջպետական, տարածաշրջանային քաղաքական զարգացումների, նավթի և բնական գազի ռեսուրսների օգտագործման, արտահանման գործընթացների պայմանագրերի որոշումների արդյունքների մշակման և կանխատեսման հաշվարկներ անելու համեմատական, վերլուծական կանխատեսման ընդհանրացման մեթոդների վրա:

Աշխատանքի ընթացքում օգտագործվել են մեծ ծավալի արխիվային նյութեր:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել միջպետական փոխհարաբերությունների, նավթի և գազի արտահանման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում:

Աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից, գրականության ցանկից, սխեմաներից: Աշխատանքի ծավալը կազմում է 132 էջ, որտեղ տեղակայված են 11 աղյուսակ, 5 նկար, 14 քարտեզ:

Աշխատանքի արդյունքների տպագրումը և քննարկումները

Աշխատանքի հիմնական դրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ընդլայնված նիստերում, զեկուցվել և հրատարակվել են ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, գիտական կոնֆերանսներում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի 2011 թ. տարեգրքերում, Շվեյցարիայում (2012 թ.): Աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է 6 գիտական հոդված:

Աշխատանքի համառոտ բնութագիրը:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, լուծված խնդիրների գիտագործնական նշանակությունը, բերված են ատենախոսության հիմնական դրույթները:

Առաջին գլխում տրվել է աշխատանքի մեթոդաբանական սկզբունքների հիմնավորումը: Վերլուծվել են Հարթլանդի, Ռիմլենդի, ինչպես նաև Իրատեսական, նոր Իրատեսական, Ինտեգրացիայի և այլ տեսութ-

յուններ: Ըստ այդ տեսությունների համաշխարհային քաղաքական իրադարձությունների կենտրոնում Եվրասիան է՝ «համաշխարհային կղզին» և ով իշխում է «համաշխարհային կղզուն» նա իշխում է աշխարհին: Եվրասիայի կենտրոնում գտնվում է «Հարթլենդը», որը տարածվում է Բոսֆորից մինչև Արևմտյան Չինաստան (Սիցիզյան Ուլդուրիա), Ղազախստանից մինչև Յնդկական օվկիանոս:

Հարթլենդը որպես ռազմավարական ու աշխարհատնտեսական տարածաշրջան պատմականորեն մշտապես եղել է աշխարհաքաղաքական իրադարձությունների կենտրոնում:

Հարթլենդի միջուկում գտնվում է Կասպյան տարածաշրջանը, որը աշխարհին էներգակիրներ մատակարարող կենտրոններից մեկն է: Ուստի Կասպից ծովի և նրան շրջապատող տարածքների աշխարհառազմավարական հարմար դիրքը գրավում է մեծ տերությունների ուշադրությունը:

Կասպյան տարածաշրջանի և Եվրասիա մայրցամաքի աշխարհաքաղաքական խնդիրները մեկ միասնության մեջ են, ունեն լուծման նույն սկզբունքները: Խնդիրը այդ սկզբունքների գնահատումն է:

Հաջորդ՝ **իրատեսական** գաղափարախոսության մեջ շահերի սկզբունքն է, ըստ որի յուրաքանչյուր պետություն ելնելով իր շահերից անցնում է ուժի կիրառման:

Ուժի կիրառումը աստիճանաբար բարդացնում է միջպետական փոխհարաբերությունները, որի հետևանքով տուժում են բոլոր մասնակիցները: Ուժի կիրառման սկզբունքին դեմ է «կարիքը»: Միմյանց կարիքը, որը կա միջպետական փոխհարաբերություններում, որովհետև ոչ մի պետություն չի կարող միայնակ գոյատևել և մեծ ու փոքր պետությունների միջև առկա է փոխադարձ կարիք, որը բոլոր մասնակիցներին կախվածության մեջ է պահում միմյանցից:

Նոր իրատեսության գաղափարախոսության մեջ բոլոր երկրների համար անվտանգության լավագույն ռազմավարությունը համագործակցությունն է, ոչ թե մրցակցությունը: Այստեղ ուժերի հավասարակշռությունն է: Ընդ որում, ներկայումս միջազգային աշխարհաքաղաքական համակարգում գերիշխում է ԱՄՆ-ն, որի շուրջն էլ համախմբվել են արևմտյան տերությունները: Միաբևեռ համակարգից բազմաբևեռի անցման գործընթացը բերում է նրան, որ Կասպյան հարակից Պարսից ծոցի, Կովկասի Կենտրոնական Ասիայի աշխարհառազմավարական

տարածաշրջաններում Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի մասնակցությամբ նոր խմբակցություն է առաջանում: Միաբևեռ համակարգին փոխարինման է գալիս մեկ այլ համակարգ, ակնկալվում է համագործակցության և հակամարտության նոր մոդել, որը արդյունք է տարբեր խմբակցությունների պետությունների ինտեգրման:

Ինտեգրացման տեսության կողմնակիցները այն կարծիքին են, որ ինտեգրումը կարող է դառնալ միջազգային խաղաղության և կայունության կարևոր գործոն, որը իր հետ կրեթի տնտեսական աճ և զարգացում:

Ինտեգրման համար գոյություն ունեն մի շարք պայմաններ:

1. Անհրաժեշտ է, որ մասնակից երկրները աշխահագրական ու հեռավորության առումով ավելի մոտ լինեն միմյանց, որպեսզի ի գործ լինեն հաղթահարել տրանսպորտային ֆինանսական ծախսերի ազատ առևտրի վրա դրված սահմանափակումները:

2. Մասնակից երկրները պետք է ունենան մշակութային, քաղաքական, ռասայական, լեզվական, պատմական և այլ ընդհանրություններ: Ընդհանրապես, Ինտեգրումը քաղաքական, մշակութային և այլ տեսակ տարածայնությունների ուղեկցությամբ հնարավոր չէ:

3. Մասնակից երկրները պետք է լինեն քանակով՝ շատ եւ չափերով՝ մեծ, որպեսզի կարողանան օգտվել տնտեսական եւ մրցակցության մասշտաբի առավելություններից և կրճատեն արտադրության ծախսերը:

4. Երկրներից յուրաքանչյուրը պետք է ունենա թե՛ պոտենցիալ եւ թե՛ փաստացի պատրաստակամություն մյուս երկրների հետ լայնածավալ տնտեսական ու առևտրային կապեր ստեղծելու համար:

5. Ինտեգրումից ձեռք բերած շահերը մոտավորապես լինեն հավասար:

6. Ներտարածաշրջանային առևտրային գրավչության համար տնտեսական ներուժի առկայություն, այնպես որ տարածաշրջանային առևտրի համար լինեն հարաբերական և բացարձակ առավելություններ:

Առանձին երկրների քաղաքական և տնտեսական ինտեգրման շնորհիվ ձևավորվում են ռեգիոնալ համակարգեր: Ինչպես նշում են «ռեգիոնալիզմի» տեսության կողմնակիցները ապագա աշխարհը կլինի ոչ թե ազգային միավորների աշխարհ, այլ տարածաշրջանային աշխարհ:

Ռեգիոնալիզմը գլոբալիզացիայի դարաշրջանի որոշիչ փուլ է: Համաաշխարհային քաղաքական և տնտեսական իրադարձությունները

ընթանում են այնպես, որ յուրքանջյուր երկիր լավագույն դիմակայության և վճառների կրճատման համար չունի այլ ելք , քան տարածաշրջանի և հարևան երկրների հետ համագործակցությունը: Այլ կերպ ասած ռեգիոնալիզմը համաշխարհային քաղաքական շուկայում ինտեգրման լավագույն ուղի է:

Ռեգիոնալիզմի սկզբունքներով ձևավորված պետությունների խմբակցությունները ներքին քաղաքական և տնտեսական խնդիրների լուծմանը զուգահեռ խնդիր ունեն գերտերությունների հետ, քանի որ հզոր պետությունների ջանքերը ուղղված են տարածաշրջանի աշխարհառազմավարական և աշխարհատնտեսական դիրքորոշմանը:

Այսպիսով, ռեգիոնալիզմը հիմք կհանդիսանա մշակելու միջպետական հակասությունների կանխարգելիչ մեխանիզմ, որը մեծացնի պետությունների համագործակցության հակումը, աստիճանաբար կստեղծվի միջպետական այնպիսի քաղաքականություն, որը կծառայի յուրաքանչյուր մասնակցի շահերին:

Աշխատանքում դրվում է ռեգիոն ստեղծելու հնարավորությունը: Ավանդական ռեգիոնները տարածաշրջանները ձևավորվել և շարունակում են ձևավորվել իրենց որոշակի սկզբունքներով ու մեխանիզմով: Ընդ որում ավանդական արդեն ձևավորված տարածաշրջաններում առկա են սոցիալ-տնտեսական, քաղաքական բազմատեսակ ու բազմաբնույթ փոխկապակցություններ, փոխհարաբերություններ: Որոշակի են նաև տարածաշրջանի ձևավորման սկզբունքները, գործունեության մեխանիզմը, նպատակը, խնդիրները:

Աշխատանքում առաջարկվում է տարածաշրջանի նոր ձև, որտեղ արդեն հարցը կարելի է լուծել ոչ թե ավանդական բազմաթիվ համակարգող գործոնների ու սկզբունքների հենքի վրա, այլ սահմանափակ գործոնների ու սկզբունքների: Այսպես, տարածաշրջան կարելի է համարել այն տարածքը, որտեղ երկրների խմբի անվտանգության նախնական մտահոգությունները այնքան են կապված միմյանց հետ, որ յուրաքանչյուրի ազգային անվտանգությունը հնարավոր չէ պատկերացնել մյուսի ազգային անվտանգությանից անկախ:

Կարելի է գալ այն եզրահանգման, որ Կասպից ծովի ավազանում և հարակից շրջաններում ձևավորվում է մի տարածաշրջան, որը դուրս է ավանդական տարածաշրջանի հատկություններից և տարածքային և կառուցվածքային առումով: Նրա սահմանները փոփոխական են,

կառուցվածքը իր ստեղծման սկզբունքներով նույնպես բացառիկ է և առանձնահատուկ: Այստեղ միավորմանը նպաստում են միմյանց հետ տնտեսական, քաղաքական համագործակցության ընդլայնման անհրաժեշտության պայքարը ահաբեկչության, կրոնական և քաղաքական ծայրահեղությունների, անդրսահմանային սպառնալիքների դեմ:

Երկրորդ գլխում վերլուծվում և գնահատվում է Կասպյան տարածաշրջանի անվտանգության և անապահովության հիմնախնդիրը և եզրահանգվում է, որ Կասպյան տարածաշրջանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել անվտանգության համալիր երկու պետությունների՝ Չինաստանի և Ռուսաստանի գլխավորությամբ:

Անվտանգության համալիրը կազմված կլինի մի խումբ երկրներից, որոնց նախնական անվտանգության մտահոգությունները այնքան են սերտաճել, որ հնարավոր չէ դրանց ազգային անվտանգությունը դիտարկել մեկը մյուսից անկախ: Պետությունները իրենց անվտանգությունը ապահովում են՝ միանալով հակադիր միասնություններին և խմբերին, այն բերում է ուժերի հավասարակշռության:

Անվտանգության կարևոր երաշխիքներից մեկը էներգետիկ անվտանգությունն է: Դա էներգակիրների առաջարկի և պահանջարկի կարգավորման, արտադրության պահեստավորման տեղափոխման անվտանգությունն է: Պահանջողների համար էներգակիրների հուսալիությունը մեծ նշանակություն ունի, քանի որ էներգակիրների պահանջը կարող է ընդհարումների և պատերազմի պատճառ դառնալ և հարկավոր է, որ թե առաջարկողները և թե պահանջարկ ունեցողները ներքաշվեն այդ խնդիրների մեջ: Այստեղ արդեն խնդրի լուծման համար անհրաժեշտ է ապահովել միջազգային անվտանգությունը, քանի որ ազգային անվտանգության ձեռք բերումը հնարավոր է դառնում մուտք գործելով միջազգային տնտեսական, ռազմական միություններ: Ընդ որում, միավորման ամենամակաթ ձևը հավաքական անվտանգությունն է, որը դառնում է ուժերի հավասարակշռման պատճառ:

Կասպյան տարածաշրջանում անվտանգությանը խանգարում են.

1. Մի շարք ափամերձ երկրների գործողությունները Կասպից ծովի տնտեսական ռեսուրսների միակողմանի շահագործման ուղղությամբ:
2. Ափամերձ երկրների միջև տարածայնությունները Կասպից ծովի իրավական ռեժիմի և նավթատար ու գազատար խողովակաշարերի հարցերի շուրջը:

3. ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք, որի ընթացքում այն աստիճանաբար մոտենում է Կասպյան տարածաշրջանին:
4. Ռուսաստանի և Ամերիկայի, Ռուսաստանի և Թուրքիայի, Թուրքիայի և Իրանի, Իրանի և Ամերիկայի միջև շահերի բախումը:

Քաղաքական բոլոր հակասությունները ազդում են էներգետիկ անվտանգության վրա, հետևաբար էներգետիկ անվտանգություն ստեղծելու համար առաջին հերթին անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ստեղծել մեկ ընդհանուր համակարգ: Այն հնարավորություն կտա ընդհանուրի մեջ որոշելու յուրաքանչյուր մասնակցի տեղն ու դերը և տնտեսական ու քաղաքական վեճերը լուծել միասնական ձևով:

Խնդրի լուծմանը ավելի մեծ հնարավորություն տալու նպատակով ռեգիոնի պետությունները ըստ իրենց տնտեսական, մերուժի, ռազմավարական ու քաղաքական առանձնահատկությունները բաժանվել են խմբերի (մանրամասն տե՛ս աղյուսակ 1)

Առանձին խմբի մեջ մտնող պետությունները ունեն իրենց տնտեսական, քաղաքական նույնատիպ խնդիրները և իրենք միայնակ չեն կարող լուծել այդ խնդիրները: Այդ պատճառով էլ խմբավորման մեջ մտնելը շահավետ է և տնտեսական և քաղաքական առումով: Յուրաքանչյուր խումբ կարիք ունի համագործակցելու այլ խմբերի հետ որպեսզի կարողանա զերծ մնալ արտաքին անվտանգությունից, իսկ անվտանգության երաշխիք կարող են լինել տարածաշրջանում ավելի մեծ քաղաքական ազդեցություն ունեցող պետությունները:

Այդ համակարգը պետք է կազմված լինի պետությունների խմբից, որոնց համար խմբավորման մեջ մտնելը շահավետ է քաղաքական, տնտեսական առումով , իսկ իրենք միայնակ չեն կարող այդ խնդիրները լուծել:

Պետությունների խմբավորումը ըստ իրենց տնտեսական և քաղաքական հնարավորությունների

Իշխանության տեսակներ	Իշխանության դրսևորումներ				
	Կարողություն	Հասանելիություն	Ջազմավարություն	հնարավորություններ	խոչընդոտներ
Գերտերություն	բացարձակ	գլոբալ	Ստատու-քվոյի պահպանում	բարձր	ցածր
Մեծ տերություն	Հարաբերական	գլոբալ	Ստատու-քվոյի պահպանում	բարձր	ցածր
Միջին տերություն	Հարաբերական	տարածաշրջանային	Ստատու-քվոյի պահպանում	ցածր	միջին
Փոքր տերություն	հարաբերական	ներքին	Ստատու-քվոյի պահպանում	ցածր	բարձր
Մանր տերություն	հարաբերական	Ներքին այլոց աջակցությամբ	Ստատու-քվոյի պահպանում	բացակայում են	բարձր

Այստեղ առավել կարևոր է արտաքին վտանգից զերծ մնալը՝ անվտանգությունը, իսկ անվտանգության երաշխիքը կարող են լինել տարածաշրջանում ավելի մեծ քաղաքական ազդեցություն ունեցող պետությունները՝ Ռուսաստանը և Չինաստանը:

Երրորդ գլխում վերլուծվել և մեկ ընդհանրության են բերվել Կասպյան ծովի և Պարսից ծոցի շուրջը ծավալված աշխարհաքաղաքական գործընթացները, ռազմավարական ծրագրերը և այսպես կոչվող «նոր մեծ խաղում» «առավել կարևոր» դերակատարների գործունեության ձևերը, նպատակները և խնդիրները: Շեշտադրված քննարկվել են Կասպից ծովի ավազանի հիմնախնդիրները:

Կասպից ծովի ավազանում «նոր մեծ խաղերի դերակատարները» բաժանվել են երեք խմբի.

Առաջին խմբի մեջ մտցվել են Իրանն ու Ռուսաստանը: Իրանը պատմական և մշակութային առումով ժամանակին Կասպյան ծովի ավազանի երկրների հետ գտնվել է միևնույն տարածաշրջանում և հավակնում է այժմ էլ ունենալ իր որոշակի դերը: Իրանի դերակատարությանը ամենից խիստ դեմ է ԱՄՆ-ն և ոչ մի ցանկություն չունի թույլ տալու, որ Իրանը մուտք գործի այս տարածաշրջան:

Երկար տարիներ տարածաշրջանի պետությունները գտնվել են նախ Ռուսաստանի, այնուհետև ԽՍՀՄ-ի կազմում և Ռուսաստանը ոչ մի դեպքում չի ցանկանում, որ այլ երկիր ևս մուտք գործի այդ ճամբար:

Տարածաշրջանում Իրանի և Ռուսաստանի դերակատարությունը ավելի է կարևորվում նաև տնտեսական առումով: Այս երկու պետություններին է բաժին ընկնում ամբողջ աշխարհի նավթի պաշարների 16,1 %, բնական գազի 42.4 %: Մեծ է նրանց դերը նավթի և բնական գազի համաշխարհային շուկայում:

Տարածաշրջանում Իրանի և Ռուսաստանի դերի առավելությունը կապված է նաև նրանց հարմար աշխարհագրական դիրքի հետ: Երկուսն էլ ունեն նպաստավոր աշխարհագրական դիրք նավթի և բնական գազի արտահանման ենթակառուցվածքի (խողովակամուղների) անցկացման տեսանկյունից: Իրանը և Ռուսաստանը Տարածաշրջանի հետ կապված են նաև իրենց մշակույթով Կարևոր է այն փաստը, որ Կասպյան տարածաշրջանի գիտական կրթական համակարգը ստեղծվել է խորհրդային տարիներին և Ռուսաստանի գիտամանկավարժական դպրոցի շարունակությունն է:

Երկրորդ խմբի մեջ առանձնացվել են ԱՄՆ-ն և Եվրոպական երկրները: Եթե առաջին խմբի երկրները գլխավոր նավթ ու բնական գազ արտահանողներն են, ապա երկրորդ խմբի մեջ գլխավոր ներմուծողներն են: Եվրոպական երկրների տնտեսական համակարգում հիմնական հենարանը Կասպյան և Պարսից ծոցի տարածաշրջանից բերված նավթն ու բնական գազն է:

Իր նպատակները իրագործելու համար ԱՄՆ-ն առաջ է քաշել «Մետաքսի ճանապարհ» նախագիծը: Այդ ճանապարհի բացումը հնարավորություն կտա տրանսպորտային միջանցք ստեղծել Սև ծովի և Պամիրի լեռների միջև:

ԱՄՆ և Արևմտաեվրոպական երկրների ծրագրերը կարող են օգուտ բերել Կասպյան տարածաշրջանի պետություններին, որովհետև ԱՄՆ-ն իր նպատակները իրագործում է՝ հաշվի առնելով նաև տեղական շահերը: Այդ մասին են վկայում ԱՄՆ-ի կողմից պաշտպանվող հետևյալ թեզերը.

- նորանկախ երկրների ամրապնդումը, ժողովրդավարության զարգացման և ազատ տնտեսության ուղղությամբ,
- աջակցության ցուցաբերում նրանց անկախության և զարգացման նկատմամբ,
- տարածաշրջանում առևտրային հնարավորությունների ընդլայնում,
- տարածաշրջանային հակամարտությունների կարգավորում՝ տնտեսական հարաբերությունների հաստատման միջոցով,
- Ամերիկայի և նրա դաշնակիցների էներգետիկ անկախության ամրապնդումը կասպյան էներգետիկ ռեսուրսների միջոցով,
- Կասպյան նոր պետությունների էներգետիկ անկախությունը համաշխարհային շուկաներին նավթի և գազի ազատ հասանելիության ապահովում:

Ամերիկայի և Արևմտաեվրոպական երկրների կողմից պաշտպանվող այս դրույթները ընդունելի են նաև տարածաշրջանի երկրների կողմից: Դրա շնորհիվ մեծանում են Արևմտյան խմբակցության կողմից Կասպյան տարածաշրջան մուտք գործելու հնարավորությունները:

Այդ հանգամանքից ելնելով ԱՄՆ-ն առաջ է քաշել «Կասպյան ավազանի պահպանման նախագիծ»: ԱՄՆ-ն մտադիր է, ահաբեկչության միջուկային զենքի տարածման և թմրանյութերի դեմ պայ-

քարի ուղղությամբ ստեղծել հատուկ զորամիավորումներ՝ Ադրբեջանի, Ղրղզստանի և Թուրքմենստանի մասնակցությամբ:

Իրենց քաղաքականությամբ ԱՄՆ-ի քաղաքականության հետ սերտաճած Եվրոմիության երկրները Կասպյան տարածաշրջանում հետապնդում են այնպիսի նպատակներ՝ ինչպիսիք են կառավարության ձևավորման և ժողովրդավարության հաստատման աջակցումը, ազատ շուկայի վրա հիմնված բարեփոխումների իրականացումը և անդրկովկասյան պետությունների տրամադրումը Ռուսաստանի դեմ:

Երրորդ խմբի մեջ առանձնացվել են նավթի և բնական գազի համաշխարհային շուկայում նոր ուռք դրած պահանջարկի մեծ հեռանկարներ ունեցող Չինաստանը, Յնդկաստանը, Ճապոնիան, Պակիստանը: Այստեղ մեծ է Չինաստանի դերը: Նա որդեգրել է հինգ խաղարար սկզբունքներ՝ խաղաղություն, համագործակցության զարգացում, առևտուր, փոխադարձ բարեկեցություն: Տարածաշրջանային գործընթացներին Չինաստանը իր հարաբերությունները դիտարկում է նաև Սիցզյան նահանգի կայունության և զարգացման տեսանկյունից: Խնդիրը կայանում է նրանում, որ Սիցզյանի նահանգը բնակեցված է ղազախ, ուզբեկ, տաջիկ և ուլդուր ժողովուրդներով և քաղաքական առունդով կա անկախություն ստանալու գաղափարը:

Վերջին տասնամյակներում Շանհայի դաշինքի ստեղծմամբ Չինաստանը փորձում է Կասպյան տարածաշրջանում մարտահրավերներ նետել ԱՄՆ-ին, Եվրոպային և Ռուսաստանին: Միաժամանակ Չինաստանին անհրաժեշտ է ապահովել և իր հյուսիսային շրջանի անվտանգությունը:

Տարածաշրջանում իր որոշակի տեղն ունի Թուրքիան: Նա Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների հետ ստորագրել է տնտեսական, մշակութային, կրթական և հաղորդակցության ավելի քան 200 պայմանագիր, որոնք ներառում են 400 նախագիծ, ավելի քան 44,4 մլրդ դոլարի արժողությամբ:

Խնդիրը այդ հնարավորությունների օգտագործման նպատակային ուղիների բացահայտումն է, որը հնարավոր է իրագործել նավթի և բնական գազի հիմքի վրա ստեղծված տնտեսական ամբողջ համակարգի զարգացումը աշխարհաքաղաքական խնդիրների հետ կապելը:

Չորրորդ զվխում գնահատվում է էներգակիրների դերն ու նշանակությունը աշխարհաքաղաքականության մեջ, բացահայտվում է էներ-

գետիկ անվտանգության և քաղաքականության միջև առկա կապի վերլուծությունը, որն իր հերթին կապված է նավթի և բնական գազի փոխադրումների կարգավորման հետ:

Խնդիրը կայանում է նրանում, որ Կասպյան տարածաշրջանում կան էներգակիրների արդյունահանման և արտահանման ծավալների ավելացման միտումներ, իսկ առկա խողովակաշարերը չեն կարող ապահովել ավելի մեծ ծավալի փոխադրումները: Դրան ավելանում է խողովակաշարերի ցանցի հիմնական հատվածի նկատմամբ Ռուսաստանի մենաշնորհային դիրքը և դրանից բխող քաղաքական և տնտեսական ճնշումներ արտահանող և անգամ եվրոպական երկրների վրա:

Արդյունքում ստացվել է էներգակիրների փոխադրումների վրա վերահսկողություն սահմանելու համար պայքարը, որի հեռահար նպատակը տարածաշրջանում քաղաքական ազդեցություն հաստատելն է:

Ներկայիս վիճակով տարածաշրջանում գործում են Բաքու Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, որն ունի 1768 կմ երկարություն և օրեկան մոտ մեկ մլն բարել նավթ և փոխադրում (տես գծ. 2):

Ռուսաստանի կողմից կառուցվել է «Կասպույտ երակ» գազամուղը, որն ունի 1213 կմ երկարություն և Ռուսաստանից գնում է դեպի Թուրքիա և եվրոպական երկրներ: Ռուսաստանից դեպի Եվրոպա է գնում նաև հյուսիսային հոսքի գազամուղը Բալթիկ ծովի տակով (տես գծ. 3):

Ռուսական ցանցին են միացված Ղազախստանի և Թուրքմենստանի գազամուղները և նավթամուղները, որոնց շնորհիվ նա շարունակում է պահել իր մենաշնորհային դիրքը նաև քաղաքական դաշտում:

Արևմտյան տերությունները Ռուսաստանի դերի փոքրացման համար ունեն գազամուղների կառուցման իրենց նախագծերը, որոնցից առավել կարևորներն են «Նաբուկոն», «Անդրկասպյանը»: Այս երկու նախագծերով նախատեսվում է Թուրքմենստանի, Ղազախստանի և Ադրբեջանի գազը Վրաստանի և Թուրքիայի վրայով հասցնել Եվրոպա (գծ. 4):

Թուրքմենստանը ցանկանում է գազամուղ կառուցել դեպի Չինաստան, որով Չինաստանը տարեկան կստանա 30 մլրդ խմ բնական գազ (գծ. 5): Մեկ այլ Անդրաֆղանական գազամուղով Թուրքմենստանը ձգտում է իր գազը հասցնել Պակիստան (գծ. 6): Նավթի և բնական գազի փոխադրումների իր ծրագրերն ունի նաև Իրանը: «SWAP» ծրագրով նախատեսվում է Կասպյան երկրների նավթը հասցնել Իրանի

հյուսիսային շրջաններ, փոխարենը Պարսից ծոցից համարժեք քանակի նավթ տալ Կասպյան երկրներին:

Ըստ կանխատեսումների Կասպյան ավազանի նավթի պաշարները կազմում են 39,4 մլն բարել: Այն ցույց է տալիս, որ ավազանի երկրները արդյունահանման ներկա ծավալները պահպանելու դեպքում 2015 թ. կհասնեն արտադրման առավելագույն մակարդակի, որից հետո կգրանցվի արդյունահանման խիստ անկում: 2025 թ. այս տարածաշրջան երկրներում բացառությամբ Իրանի նավթը խիստ կպակասի:


Աղյուսակ 2

Նավթի պաշարները և արտահանման ծավալները


Պետություն	Պաշարները մլն բարել	Արդյունահանումը մն բարել	Սպառումը տարի
1. Ադրբեջան	7000	1,041	18
2. Թուրքմենստան	700	0,197	11
3. Ուզբեկստան	594	0,07	23
4. Ղազախստան	30000	4,552	51
5. Իրան	137600	4,552	83
5. Ռուսաստան	79000	10,270	28

Դրա հետևանքով կպակասեն նաև նոր նավթամուղներ ու գազամուղներ կառուցելու միտումները և դրանց շուրջը ծավալվող աշխարհաքաղաքական վեճերը: Սակայն տարածաշրջանը կշարունակի մնալ աշխարհաքաղաքական գործընթացների կիզակետում:


Հիմնգրեթող գլխում քննարկվում են Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական հիմնախնդիրները: ԱՄՆ-ն և նրա աջակիցները ձգտում են տարածաշրջանի վրա վերահսկողություն սահմանելով թուլացնել Ռուսաստանի աջակցությունը:




Նկ. 1. Ն.Սայիկյանի աշխարհագրաբանական մոդելը



ՊՃ. 2 Բաքու-Թբիլիսի Ջեյհան նավթամուղը



ՊՃ. 3 Չյուսիսային խորի գազամուղը



Գծ 6 Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան գազամուղը (նախագիծ)

Ռուսաստանն իր հերթին որոշակի քայլեր է կատարում ամրապնդելու իր դիրքերը: Ռուսական քայլերից մեկը Շանհայցյան պայմանագրի ստեղծումն է, որի կարգախոսն է «Անվտանգությունը լինում է գործընկերության միջոցով»: Արևմտյան տերությունները անկախ իրենց կանքից պետք է հաշվի նստեն այս պայմանագրի մեջ մտնող խմբակցության հետ, քանի որ այստեղ է ապրում աշխարհի բնակչության 43 %: Խմբակցության հիմնական և դիտորդի կարգավիճակում գտնվող երկրները տալիս են համաշխարհային համախառն արդյունքի 22 %: (Մանրամասն տես աղյուսակ համ. 3)

Կասպյան տարածաշրջանում հեռանկարային առումով մեծ դեր ունի Իրանը: Նա աստիճանաբար դառնում է նոր ձևավորվող տարածաշրջանի աշխարհաքաղաքական համակարգի կենտրոն: Հետևաբար, ԱՄՆ-ն աստիճանաբար կընդունի Իրանի աշխարհառազմավարական կարևորությունը:

Շանհայան պայմանագրի մեջ մտնող պետությունների ցուցակ

Երկրներ	Անդամակցության տեսակը	Պետության տարածքը Բ.կմ	Բնակչությունը (միլիոն մարդ)	ՀՆԱ (միլիարդ դոլար)	ՀՆԱ-ի աճի տոկոսային չափը	Մեկ շնչի հաշվով (դոլար)	Արտահանումներ (միլիարդ դոլար)	Ներմուծումներ (միլիարդ դոլար)
Ռուսաստան	Հիմնական	17098242	138,73	2229	3.8%	15300	376.7	237.3
Չինաստան	Հիմնական	9596961	1336,71	9872	10.3%	7400	1506	1307
Ղրղզստան	Հիմնական	3515351	55,15	271.23	3.3%	5025	17.0664	10.1628
Տաջիկստան	Հիմնական							
Ուզբեկստան	Հիմնական							
Ղազախստան	Հիմնական							
Հնդկաստան	Դիտորդի կարգավիճակ	3287193	1189,17	4046	8.3%	3400	201`	327
Իրան	Դիտորդի կարգավիճակ	1648195	77,89	838.3	3%	11200	78.69	58.97
Պակիստան	Դիտորդի կարգավիճակ	796095	187,34	451.2	2.7%	2400	20.29	32.71
Մոնղոլիա	Դիտորդի կարգավիճակ	1564116	3,13	10.08	6.1%	3300	2.899	3.3
Ընդհանուր	10	37506153	2988,155	17798.66	4.74%	6310	2202.6454	1976.4428

Այսպիսով, Հարթլանդը կվերադառնա աշխարհաքաղաքական ուսումնասիրությունների ասպարեզ և իր նախկին դիրքերից կշարժվի դեպի հարավ և կտեղավորվի Կասպից ծովի և Պարսից ծոցի միջև: Իրանը կտեղավորվի Նոր Հարթլանդի բևեռում:

Իրանի դերի աշխարհաքաղաքական մեծացմամբ շահագրգռված են նաև Կասպյան մյուս երկրները: Եվրոպան նույնպես մեծ շահեր ունի Իրանում կապված պահանջարկի հետ: Նրանք Իրանը դիտում են որպես պոտենցիալ գազ մատակարարող:

Այսպիսով, Կասպյան տարածաշրջանի և իրենց տնտեսական, աշխարհաքաղաքական շահերը փնտրող Արևմտյան տերությունները աստիճանաբար կընդունեն Իրանի հանգուցային դերը և կձգտեն նրա հետ համագործակցել և հաստատել կայուն տնտեսական, քաղաքական հարաբերությունները, որն իր հերթին կնպաստի էներգետիկ տնտեսության կարգավորմանը:

ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միջնեգիոնալ ուժերի առկայությունը մեծ ազդեցություն ունի ռեգիոնալ անվտանգության վրա: Արևմուտքի պլանները՝ մասնավորապես Կասպյան ավազանում Իրաքի և Աֆղանստանի օկուպացիան, ինչպես նաև հյուսիսային Չինաստանի, Կենտրոնական Ասիայի, Վրաստանի իրադարձությունները, Ղարաբաղի և Հյուսիսկովկասյան ճգնաժամները խոսում են տարածաշրջանի կայունացման համար միջնեգիոնալ ուժերի ներգրավվածության մասին:
2. Արևմուտքին ձեռնտու ուղղությամբ նավթամուղների և գազամուղների ներկայիս ցանցը և ուղղությունները մասնավորապես ԱՄՆ-ի, Իրանի և Ռուսաստանի կողմից բացասական վերաբերմունքի են արժանանում: Չինաստանը նույնպես դժգոհ է, որ ամբողջ գազը և նավթը Կասպյան տարածաշրջանից ուղղվում է դեպի Եվրոպա:
3. Արևմուտքը և ԱՄՆ Սովետական Միության փլուզումից հետո, գլոբալ և ռեգիոնալ առումով մարտահրավեր են նետել Ռուսաստանին, որի պատճառով Ռուսաստանը իր սեփական մերձակա սահմանային գոտիները հայտարարել է պաշտպանական ռեգիոններ, ինչը դուր չի գալիս Արևմուտքին:
4. Սովետական Միության փլուզումից հետո Կասպյան տարածաշրջանը կառավարելու համար ՆԱՏՕ-ի ֆունկցիաների և իրակա-

նացվող քայլերի փոփոխությունը, ինչպես նաև ակտիվ և տիրապետող պաշտպանական կազմակերպությունների պակասը, որոնք կարող են իրենց վրա վերցնել ռեգիոնալ անվտանգությունը պատճառ հանդիսացան, որ ՆԱՏՕ-ն «Համագործակցություն խաղաղության համար» նախագծի տեսքով և տարածաշրջանի ռազմականացման, որոշ երկրներում հեղափոխություններ կազմակերպելու օգնությամբ Կասպյան տարածաշրջանում կստեղծի ռազմական և պաշտպանական առավելություն: Նաև միանգամայն պարզ է, որ Աֆղանստանի և Իրաքի բռնազավթումը և Իրանի շրջափակումը նույնպես Կասպյան տարածաշրջանում իշխելու նպատակներ ունեն:

5. Արևմուտքը իր ռազմական և պաշտպանական գործողություններով պատճառ դարձավ, որ տարածաշրջանում ուժ ներկայացնող այլ երկրների՝ Չինաստանի և Ռուսաստանի ինչպես նաև Հնդկաստանի, Իրանի, Պակիստանի ու Ղազախստանի աջակցությամբ միավորվեն Շանհայցյան համաձայնագրի շուրջ: Կանխատեսվում է, որ ապագայում այս ինտեգրացիան իր հետևից կբերի ՆԱՏՕ-ի և Շանհայի միջև փոխադարձ համաձայնագրի ստորագրման, որը կարող է ռազմական անվտանգության ոլորտում հավասարակշռություն ստեղծել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՄՆ և Արևմուտքը պետք է ճանաչեն Ռուսաստանի և Չինաստանի դերակատարությունը, որը կհավասարակշռի ռեգիոնալ անվտանգությունը:
2. Ռեգիոնալ իրավիճակի աշխարհաքաղաքական դրությունը, ռեսուրսները և հետաքրքրությունները արհամարհելու դեպքում էներգիայի տեղափոխությունը կարող է լարվածություն առաջացնել Արևմուտքի և Կասպյան երկրների միջև: Այս լարվածության վերացման համար նպատակահարմար է նավթամուղների և գազամուղների ցանցը ընդարձակել նոր անվտանգ ուղիներով:
3. Ավելի նախընտրելի և լավ է, եթե հակասություն, անհավասարակշռություն չկա Արևմուտքի և Կասպյան տարածաշրջանի միջև: Հատկապես Արևմուտքի հետ մերձեցված երկրները, ինչպես օրինակ Ադրբեջանը, Վրաստանը և այլն, Արևմուտքի համար դառնում են հենարաններ, որը Արևմուտքին ավելի է մոտեցնում Շանհայի համաձայնագրին: Այս մերձեցումը հետագա հավասարակշռություն է

առաջացնելու և շահութաբեր է լինելու տարածաշրջանի երկրների համար:

4. Առաջարկվում է, որ Շանհայի համաձայնագրի երկրները աջակցեն Կասպյան տարածաշրջանի երկրների միջև թշնամության վերացմանը և բարեկամության ստեղծմանը, որպեսզի այդ երկրները կարողանան մերձեցնան մեկը մյուսին: Ռուսաստանի և Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ու Կասպից ծովի ավազանի քաղաքական ռեժիմների միջև տարածայնությունների լուծումը քայլ առաջ կլինի տարածաշրջանում խաղաղություն հաստատելու տեսակետից:
5. Շանհայի համաձայնագրերի շրջանակներում դառնալ ավելի ակտիվ: Կատարել նոր կարևոր երկրների՝ Հնդկաստանի, Իրանի և Պակիստանի, ինչպես նաև տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անդամակցությունը, որը Շանհայի համաձայնագրի պրոբլեմների լուծմանը ուղղված լավագույն ռազմավարությունն է:
6. Շանհայի համաձայնագիրը վերաձևավորել անվտանգության քաղաքական և տնտեսական համաձայնագրի և ընդարձակել նրա ռեգիոնալ միտումները:
7. Խրախուսել «Համագործակցություն» հանուն խաղաղության և Շանհայական պայմանագրի երկրների փոխհամագործակցության ընդարձակումը, որը Շանհայական համաձայնագրին հնարավորություն կտա ստեղծել ռեգիոնալ անվտանգության հավասարակշռություն:

***Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից հրատարակվել են
հետևյալ աշխատանքները***

1. Ավագյան Ա.Ռ., Ղորբան Խոսրավի ԻԻՀ, «Կասպից ծովի և հարակից շրջանների քաղաքաաշխարհագրական դիրքի վերլուծությունը»: Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը: Լ.Հ.Վալեսյանի ծննդյան 80-ամյակին և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2011 թ. էջ 23-29
2. Ավագյան Ա.Ռ., Ղորբան Խոսրավի ԻԻՀ, Ֆաթիջո Մ. «Իրանի նավթի և բնական գազի նպատակային օգտագործման հիմնախնդիրը», ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի Տարեգիրք, 2011 թ. (հրատարակ-

- վել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ), էջ 435-441
3. Ավագյան Ա.Ռ., Ղորբան Խոսրովի ԻԻՀ, «Նավթային ռեսուրսների (նավթի) համերկրային հիմնախնդիրները», Կիրառական երկրաբանության և աշխարհագրության արդի հիմնահարցերը, Պ.Բոշնադյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2011 թ. էջ 215-218
 4. Ավագյան Ա.Ռ., Ղորբան Խոսրովի ԻԻՀ, «Կասպից ծովի և հարակից շրջանների պատմաաշխարհագրական վերլուծությունը», Կրթությունը և գիտությունը Արցախում», 2011 թ., համ 1-2, էջ 117-120
 5. Ghorban Khosravi, Turkey and energy security of Caspian Sea region, Archive Des Sciences, Archive of Sciences Journal, Switzerland, Geneva, Volume 65 Issue 4, Apr. 2012, pp: 10-15
 6. Ghorban Khosravi, NATO and Energy Security in Eurasia, Archives des Sciences, Archive of Sciences Journal, Switzerland, Geneva, 2012, pp 349-354

РЕЗЮМЕ

Отраслевые формы организации в общественной жизни постепенно отодвигаются на второй план, уступая место региональным формам.

В деле решения проблем региональной организации общественной жизни определенное место занимает география как координирующая наука.

В прибрежных районах Каспийского моря формируется регион особого содержания, который отличается от традиционных региональных форм общественной жизни своими принципами организации, внутренним механизмом. Научное обоснование, раскрытие механизма этих принципов имеют как теоритическое, так и практическое значение, ибо помогут разработать перспективные программы данного регионального развития.

Благодаря мощным природным ресурсам, благоприятному географическому расположению в Каспийском регионе свое важное место занимает Иран. В работе рассматриваются и оцениваются геополитические явления в контексте, исторического развития, нынешнего состояния и перспективах дальнейшего развития в Каспийском регионе.

В Каспийском бассейне и прилежащих районах формируется регион, в основе которого помимо сугубо экономических преобладают политические принципы. Главное здесь – забота о безопасности.

Внешнеполитические силы постепенно распространяют свое влияние в регионе, создавая политическую напряженность; наблюдаются межгосударственные, межэтнические, внутривполитические столкновения, которые приобретают постоянный характер.

Все это может вызвать политический и военный „большой пожар” в регионе и вокруг него. Этот „пожар” может охватить и другие регионы.

Для решения проблемы необходимо создать такие региональные системы, где наряду с преобладанием внутренних интересов будут учитываться интересы сверхдержав. Необходимо также в регионе создать условия для политического, экономического сотрудничества стран, входящих в организацию „Сотрудничество ради мира и Шанхайского соглашения”, преследующей свои определенные цели.

Для осуществления этого:

- США и Запад должны признать роль России и Китая, что уравнивает региональную безопасность.
- В случае пренебрежения геополитическим состоянием регионального положения, ресурсами и интересами перемещение энергоносителей может вызвать напряжение между Западом и Каспийскими странами.

Причина возникновения этого напряжения – в сгруппированности этих стран, что может угрожать энергетической безопасности. В этом случае целесообразным решением является расширение сети нефтепровода и газопровода новыми безопасными и экономными путями.

- Лучше и более предпочтительно отсутствие противоречий, неуравновешенности между Западом и Каспийским регионом. Приближенные к Западу страны, как, например, Азербайджан, Грузия и другие, становятся для Запада опорой, приближающей его к Шанхайскому соглашению. Это сближение в будущем создаст равновесие и будет выгодным для стран региона.
- Предлагается, чтобы страны Шанхайского соглашения содействовали прекращению вражды между странами Каспийского региона и установлению дружбы, снятию напряженности и кризиса в регионе, сближению стран друг с другом. Снятие напряжения между Россией и Грузией, Азербайджаном и Арменией, решение серьезных противоречий вокруг легализации политических режимов Каспийского бассейна будет еще одним шагом к установлению мира в регионе.
- Активизация сотрудничества в рамках Шанхайского соглашения. Присоединение новых важных стран, как, например, Индии, Ирана и Пакистана, а также стран региона, например, Грузии, не враждующих, как Азербайджан и Армения, в настоящее время является наилучшей стратегией, направленной на решение проблем Шанхайского соглашения.
- Преобразить Шанхайское соглашение, сделать его действующим в политическом и экономическом аспектах и расширить его региональные возможности.
- Исключение стран – участниц проекта „Сотрудничество на благо мира” из участия в Шанхайском соглашении и, в то же время, присоединение к подобным проектам, что даст возможность Шанхайскому соглашению достичь равновесия в региональной безопасности.

В случае решения этих проблем, в Каспийском регионе и вокруг него образуется устойчивая геополитическая атмосфера, что в свою очередь будет способствовать более целенаправленному использованию нефти и природных ресурсов региона в целом и, в особенности, Ирана, и ожидать большего притока к региону.

Выработанные принципы могут применяться для организации вновь формирующихся экономических систем и в других регионах земного шара.

SUMMARY

Nowadays, the territorial (regional) organization processes of economy become more actual and more useful.

Geography has its important role in the processes of solving the territorial organization problems of society.

In the coastlines regions of Caspian Sea it is being created one new region with the unique contest, which stand apart from the traditional territorial form of society by his principle and inside mechanisms of creation. Scientific assessment and clarification of these principles has a huge economical and practical importance. It will help a create perspective projects for development of this region.

Iran has its important place in the Caspian region due to his good geographical position and big natural resources potential. There have been a investigated the geopolitical processes (origin, history, actual situation and perspectives) occurring in the Caspian region and in Iran.

It is being created a new situation in the Caspian Sea region in which predominate not only economical but political principles as well. Here the main point is security solicitudes.

Outside political forces enlarge their presence in the region making political pressure, frequent intergovernmental, interethnic and inside conflicts. And before mentioned situation can make a political and military “big fire” which can enlarge its borders and include new regions.

There are needed to make new regional systems in which will be included not only the priorities of regional countries but also superpower countries’ priorities too. And according to this it is needed to make new conditions for cooperation in the field of politics and economy between countries of Agreement on Cooperation of Peace and of Shanghai Cooperation Organization countries. There are some suggestions of implimentation for mationed cooperation:

1. The USA and the West must recognize the role of Russian Federation and China which will balance the regional security.
2. The oil and gas pipelines must be enlarged trough new save and economically effective routs, because the ignoring of interests of regional geopolitical situation, the transportation of energy can make pressure between countries of West and Caspian region.

3. It is better if there are no any contradiction and misbalance between countries of West and Caspian region. And especially there are some countries, for example Azerbaijan and Georgia that have become closer to West which makes much more closer West to Shanghai countries. This will create balance between countries of regions and will be profitable for them.
4. It is suggested that Shanghai Cooperation Organization countries will support Caspian region countries to solve the problems between them and to make more friendly, peace region without any crisis.
5. Become more active in the framework of Shanghai cooperation.
6. To transform the Shanghai agreements into security, political and economical fields and enlarge its regional trends.

The solving of these problems will make a sustainable geopolitical situation in the Caspian Region which will maintain of profitable usage of Iranian oil and other natural resources.

Designed principles can be used in the creation processes of new political systems for other regions of world as well.